

ԲԱՅՆԵԳԻՆ

և Պուլկարիա

10 ֆր.
5 "

Արտասահման

Տարեկ. 12 ֆր.

վեցամս. 6 "

ԿԱՆԻՍԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՍԵՊՏ. 23 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 180

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ

—*—

«Վարժապետը խափու է, ո՞րի հոգ. հերիք է որ ան իր պաշտօնին մէջ չը թերանար. վարդապետն ու տէրտէրը աս ու ան մտլութեան մէջ կը տապալտկին. ի՞նչ փոյթ, բաւ է որ անոնք իրենց եկեղեցական պարտականութիւնը կը կատարեն պէտք եղածին պէս. յեղափոխական գործիչը աղջիկներ գլխէ կը հանէ և մինչև իսկ զանոնք մայր կընէ ու կը լքանէ, ի՞նչ կարեւորութիւն ունի, հերիք է որ ան իր հանրային պարտականութիւնը ըմբռնած է լիովին»:

Ահաւասիկ այն ցաւագար վարդապետութեան հոսանքը, ուր ինկաւ մեր ժողովուրդը մանաւանդ վերջին ատեններս: Անհատական բարոյականը կրնամ ըսել և ոչ մէկ ազգի մէջ, այնքան անպէտ ու անկարեւոր նկատուեցաւ, որքան մեր մէջ. եղան ուղբալի ժամանակներ ուր հանրային մարդը— ըլլալ սքեմին մէջ փաթտուած, ըլլալ յեղափոխական վերաբերման մը տակ— ամենէն աւելի առփանքով տապալտկեցաւ մինչև իսկ զրուանեան պագշտութեանց մէջ... և միևնոյն ատեն շատերուն «ատիկա իր անձին կը վերաբերի» ապուշ ու միամիտ չքմեղանքին արժանացաւ:

Յայտնի է, որ ազգերը կը կազմուին անհատներէ և անհատներու բարոյականը շինող դպրոցները մէկէ աւելի են: Եկեղեցին, դպրոցը, տունը, շուկան ամենքն ալ իրենց բաժինն ունին այդ փրկարար աշխատութեան մէջ: Յեղափոխական կեանքը ամենէն կարեւոր փորձաքարներէն մէկն եղաւ անոր և շատ ցաւալի է ըսել, որ խոշոր թուով սե գէմքեր երեւան բերաւ յաւիտեանական ամօթի և պժգանաց արժանի:

Այս անհատներու բարոյական հաւաքական սփռն է, որ կը ներկայացունէ ազգին բարոյական

նր. անհատի մը վրայ երեցած անբարոյականութիւնը — երբ մանաւանդ ան հանրային մարդն է — ուղղակի իր ազդեցութիւնն ունի և հետեալար շատ վատ տպաւորութիւն թողելու է և երբէք արժանանալու չէ՝ մեր ներող նայածքին. ուրիշ կերպով դժոխոյին համակերպութիւն մը ցոյց տուած պիտի ըլլայինք դէպի այն անկումները, որոնք ազճատել կը ձգտին անհատներու և հետեալար ամբողջ ազգին բարոյական նկարագրերը:

Երբ դպրոցը արտագրէ՝ խման, տափակ ու անբարոյական վարժապետներու շնորհիւ, իմաստակներու լէգէոն մը, որին մինակ առաւելութիւնն է— և այն առանց կարեւոր ուսումնասիրութիւններ ընելու— հեգնել կրօնն ու եկեղեցին, երբ շուկան տրտադրէ՝ հրէական նախանձը գլորդող ճարտարներէն մը շնորհիւ, լուրջ ու պարկեշտ քաղաքայիններու տեղ գող ու աւազակ չարչիւներ, երբ եկեղեցին արտագրէ սքեմին պէս սե սրտեր և երբ տունը արտագրէ՝ ընտանեկան յոռի կրթութեան մը շնորհիւ, նշանաւոր հայհոյիչներ, ալ ո՞ր պիտի գտնենք մաքուր տարրը որու համար կոկորդնիս կը պատուենք հրապարայնելու մէջ:

Ուստի ամեն պարագայի տակ անհատին բարոյականը մեծ դեր ունի հանրային բարոյականը շինելու գործին մէջ, զոր պէտք չէ՝ անտեսել:

Ներկայ յօդուածը՝ զոր թելադրած է գրել մեզ Սիլվիոյ Բէէն կարեւոր բարեկամ մը, իր քստմնեցուցիչ շարժառիթն ունի, որին վրայ պիտի ծանրանանք ուրիշ առթիւ, վատ իրողութիւնը բացարձակապէս ստուգելէ յետոյ:

Մենք առ այժմ կը շեշտենք անհատական բարոյականին կարեւորութիւնը և կը յանձնարարենք ջերմիւ փնտռել զայն մէր բոլոր ընտրութեանցը մէջ:

ԾԱՆՕԹ

ԱՉԳԱՅԻՆ

Ա. Զ. Դ.

Հոգաբարձութիւնս կը ծանուցանէ թէ այն ամէն ծնողք որոնց աղքատ ըլլալը հաստատուած է ազգային պաշտօնական մարմինէն, և որք կը փափաքին իրենց զաւակները ձրիաբար ընդունել տալ ի վարժարան, թող փութան, վաղը, կիրակէ, 24 սեպտ. ժամը 1էն մինչև 12 գալ խորհրդարան Հոգաբարձութեան, տօմարին մէջ արձանագրել տալու իրենց զաւակաց անունները:

Ի Դիմաց Հոգաբարձութեան Ազգ. Երկու. Վրժրնց
Վ. Ատենագպրի Ատենագետ
Գ. Կիւլպէսեռեան Յ. Մ. Թովմասեան

— Բառի նուկէլի մէջ կը կարգանք թէ մեծահարուստ Պ. Ազէքսանսը Մանթաշեան որ 15 օրէ ի վեր Բարիկ կը գտնուի, տեղւոյն հայ մատրան հոգաբարձութեան խնդրանքին վրայ, խոստացեր է Հայկական մատուռի մը շինութեան բոլոր հոգը ու ծախսը ինքը ստանձնել:

— Վիէննայի Միթիթարեան Հարց տպարանը՝ որ ամեն ատեն արուեստին բոլոր կատարելութեամբը օժտուած քսանչէլի հրատարակութիւններ կընէ, այս անգամ ալ զեղատիպ պատկերներով ու քարտէսներով զարդարուն «Զեյթունի անցեալէն ու ներկայէն» անուն կարեւոր գրքին Ա. մասը հրապարակ հանած է, զոր շերմապէս կը յանձնարարենք մեր ամեն կարգի բանասիրաց շնորհակցութեանը:

Գինն է 3 ֆր. 75 սանդիմ.

— Պատրիարքարանէ Յեպտ. 9 թուականապաշտօնական նամակ մը եկած է տեղւոյն թաղ. խորհուրդին, ուղեալ առ ատենագետն Որբախընամի. այդ նամակը կը ծանուցանէ որ նպատից յանձնաժողովը ընդունած է Վառնայի Որբախնամ ընկերութեան կողմէ զրկուած 6 ոսկին, զոր պիտի զրկէ ի Վարագ:

Կը յուսայինք որ նոյնիմաստ նամակ մ'ալ եկած ըլլար թաղ. խորհուրդին, յարտարարող թէ՛ մասնաւոր վարժարանի մը հանդէսին առթիւ ներկայ գտնուող ժողովուրդէն հաւաքուած 46 ֆր. 25 սանդիմի գումարն ալ զրկուած է ի Պատրիարքարան. բայց աւագ, յուսախաբ եղանք...

— Առաջիկայ Յունիարէն սկսելու Բարիկի մէջ պիտի սկսի հրատարակուիլ «Ժամանակ» անունով պատկերազարդ գրական և դիտական հանդէս մը, նոր-Դարի թղթակից Պ. Հախումեանի տնօրէնութեամբ:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ Յ. Կ. ՊՈՆՃՈՒԲԵԱՆԻ

Գ. Հասոր նոր Ընթերցարանը

Ա. տարի գին 60 սանդիմ. Բ. տարի գին 1 ֆր. Գ. տարի գին 1 ֆրանք. Դիմել յօրինողին սահմանցով, Յ. Կ. Պոնճուբեան Վառնա
Քսան օրինակ գնողին համար 15 0 | 0 շեղ:

ԱՆՆՄԱՆ ՃԱՅԿԵՐՈՅԹ ՄԸ

Բարիկ 10/23 սեպտ. 1900

Արուեստահանդէսի առթիւ և ոչ մէկ ազգի պատմութեան մէջ յիշուած հայկերոյթ մը տըրուեցաւ երէկ (22 սեպտեմբ.) շաբաթ, թիւիքըրի պարտէզին մէջ:

Հրաւիրեալներն էին Ֆրանսայի քաղաքապետներն, որք կը բաշխանան 36 հազար հոգիէ, և որոց սակայն 21,500ը ներկայ էր: Ասոնց հետ հաշուելով Ծերակայտը, Երեսփոխանութիւնը, նախարարութիւնը և այլ հրաւիրեալները, սեղանին մասնակցողներու թիւը հասաւ 22,500 (քսաներկու հազար հինգ հարիւր) հոգի, որոնք 4000 սպասարկուներ ունէին:

Սոյն ճաշկերոյթը պատրաստեցին երկու ճաշարանապետներ, Բօթէլ և Շապօ, 15 խոհարարապետ, 200 խոհարար և 250 մատրուակներ, հետեւեալ կարգաւ.

Խոհանոց և մառան կարմիր. սեղան 54, սպաս 1989			
" կապոյտ. "	63	"	2268
" Դեղին. "	54	"	1940
" կանաչ. "	60	"	2160
" վարդագոյն "	57	"	2052
" Մանիշակ "	57	"	2052
" Շաղանակա. "	36	"	1296
" A "	54	"	1944
" B "	54	"	1944
" C "	54	"	1944
" D "	63	"	2268

Ընդամենը 606 սեղան և 21,860 սպաս:

Նախագահական սեղանն ալ ի միասին հաշուելով կունենանք 22,500 հոգիի պատկառելի

գումարը . իսկ խոհաքարներով ու սպասաւորներով կողմնակներ աւելի քան 27 հազար հոգի , որոնք վայելեցին մօտաւորապէս :

1800 հազարապագ (փանթոն)
2500 լիտր կանաչ լուբիա, գետնախնձոր և լախուր (ֆերէպիզ)
2400 քիւր եզան ֆիլէթո
2000 քիւր Լօսիթ (Սալաւոն պաշրդր)
2500 հատ հալիկ (գիրցուցած).
1200 լիտր Մալոնէշ
1000 քիւր խաղող
4000 հատ թրւղ
6000 " ճանձ
4000 " խնձոր
10.000 " Դեղձ
20.000 " Սալոր
20.000 " Բիսալի (տեսակ մը պտուղ).

Գինի 50.000 շիշ , երեք տեսակ :

Քաղաքապետներուն ճաշարահ-պարտէզը մտնելին ՆՐԵՔ ժամ տեւեց : ()

Ինչ որ ամենէն ուշագրան է՝ հազիւ 200 պնակ կտորած է հարիւր ութսուն հազարէն , և հարիւր գաւաթ՝ ութսուն հազարէն : (Ճիշդ մեր սպասաւորներուն նման) :

ԱՐԳՈՍ

(*) Նախորդ արուեստահանգէսին ներկայ եղող քաղաքապետաց թիւը 9500 էր , իսկ այս անգամ 21,500 :

ՀԱՆԱՏԱ... ԲԱՅՑ ՄԻ ՅՈՒՍԱՐ

Հաւատա՛ որ Պուլկարահայ վարժարանները բարեկարգելու համար կարծես շատ մը փոխանակութիւններ ըլլան ու ծրագիրներ պատրաստուին , բայց մի՛ յուսար որ այդ վարժարանները հիմնովին բարեկարգուին :

Հաւատա՛ որ Գեր. Պաղճեան վարդապետ Ֆիլիպէի ազգայնոց մէջ տիրած երկպառակութիւնը բառնալու պաշտօնը ունենայ , բայց մի՛ յուսար որ Ֆիլիպէի մէջէն երկպառակութիւնը բարձուի :

Հաւատա՛ որ Բուսճուքի եկեղեցին ուսեալ քահանայի մը պէտք ունի , բայց մի՛ յուսար որ այդպիսի քահանայ մը կարենայ պաշտօնավարել հոն՝ շնորհիւ աւագ երէցին զալ ձնելիք մանուկներուն :

Հաւատա՛ որ Հումնույի քահանաները ժողովուրդին սէր եւ խաղաղութիւն խրատեն , բայց մի՛ յուսար որ իրենք (տէրպապաները) իրենց մէջ այդ սէրն ու խաղաղութիւնը պիտի կարենան պահել :

Հաւատա՛ որ Մարիճա գետի վարժարանի տնօրէնը անմեղ հոշակուի , բայց մի՛ յուսար որ անկա յանցաւոր եղած չըլլայ :

Հաւատա՛ որ մասնաւոր վարժարանի մը ոնուանկան վկայաւաշխութեան տոթիւ ի նպաստ Որբերու հանգիստականներէն 45 ֆր. 25 սանգիմ հաւաքուի , բայց մի՛ յուսար որ այդ գումարը մինչև հիմա նպաստից Յանձնաժողովին կամ Որբախնամ ընկերութեան մը զրկուած ըլլայ :

Հաւատա՛ որ ի նպաստ «Հայաստանի Որբերուն» վառնայի մէջ 1900 Յուլիս 1ին թատերական ներկայացում մը տրուի , բայց մի՛ յուսար որ անոր հաշիւը ըստ օրինի հասարակութեան ներկայացուի :

Հաւատա՛ որ կարգ մը պարոններ նստած ելած տեղերնին ամեն խնդիրներու վրայ խոշոր խոշոր ջարդեն , բայց մի՛ յուսար որ երբ իրենց առաջարկուի զանոնք գործադրել՝ ամօթահար կծիկը չդնեն :

ԶՈՒԹԱԿ

ՍԻՐԱՑԻՆ ԿԱՅԾԵՐ

ՎՏԱՐԱՆԴԻՆ

Երիտասարդ շատեր մը թոյլ , գրչիկոր՝ ֆողոցներէն կ'անցնի , յուշիկ , ամէն օր , Անուշադիր՝ եռուզեռուն կեանքներուն , Այլերը պիշ՝ դէպ՝ երկինքը շողշողուն :

Ան , հեռացած հայրենիքէն մոխրակոյտ , Տար աշխարհի արեւին տակը անփոքր Ապաւեն մը գրեցել կարծեց , եւ հիմա Խոյ կոծերու , ցաւերու մէջ կը հեւայ :

Դրժնեայ բաղդին լրկանքներուն եւրակայ՝ Ան որս մըն է , ջրաս , նրկուն , անըզգայ . Իր ճրգումներն , իսեպներն աշրագան՝ Այ մարած եւ հուրին նրման սրբազան :

Լրքում է ան , սովաշրջուկ , եղկեղի , Դանդաշեղով փողոցները կը յածի . Իսկ մարդերը ու յաները՝ կոշտուկոտ՝ Կը ֆեֆելին , կը ծիծաղին անասունո :

Ոհ , չի կրնար անյագ մըսփին տալ յագուրդ , Զո՛ւր կը գրապէ ըստմոխսը՝ դոժ , անգութ . Պոռժուաներ ընկեղ , հասսիոր հարուսներ Լոկ խօսք կուտան ու կը մնան անսարքեր :

Յուսակրտար , անտան , անիւր եւ անոք , Կը սպասէ ան , հիմա , մահուան անողոք , Ան՝ երբեմնի պատանին խօշ , սեգ , գրաւոր՝ Սեւ փոսին մէջ կ'ուզէ գրեցել կեանք , սէր , վարդ...
ՍԻՐԱՐԵ
ԾՈՒԹՈՐ

11 սեպտ. 1900



ՄԵՆԵԼԻՔ. ՆԷԿԻՒՍ (ՎԱՅՈՐ) ՀԱՊԵՇԻՍՏԱՆԻ

Լրագրութեան անցեալ դարու մէջ բաժանորդագրութիւնը. — Անցեալ դարու մեծ լրագիրներու խմբագրատունները վաճառանոցներու կը նմանէին, կըսէ ֆրանսական թերթ մը, նկատողութեան առնելով Լիւն աւուս լրագրի մը անցեալ 1790 Յունիս 4ի մէկ յօդուածը, որուն մէջ նոյն օրաթերթի խմբագիր Ապէլ Բէյնէ իր գործերու վիճակին վրայ խօսելով կըսէ. «Բաժանորդները օրէ օր յոռի կը վճարեն. ոմանք բերքերով կը հասուցանեն. պարոն մը Բէրկիորտի գետնաստեղծով կը վճարէ պարտքը. ուրիշ մը Մանի ընտիր մոմով, կին մը կար կարելով և Շամբան եացի նօտար մըն ալ փրփրալից շամբանեայի գինով»:

(Հիմակուան կարգ մը բաժանորդներ գոնէ այդ կերպով ալ չեն վճարեր իրենց պարտքը):

Ելեկտրական դատարանը.— Նիւ Ճէրսի (Միաց. Նահանգք) դատարաններէն մին ելեկտրականութեան մէկ նոր կիրառութիւնը գտած է: Տեսնելով որ իր հարցաքննած գինովները գրասեղանին շուրջը գտնուած արդրէ վանդակորմին կը կրթնին ու միշտ կը քնանան, ելեկտրական բախոց մը զետեղեր է գրասեղանին տակը և թելերով ելեկտրական հոսանք հաղորդել վանդակորմին: Երբ գինով մը կրթնի ուզէ՝ դատաւորը կըսէ.— Շիտակ կեցիր, ու անմիջապէս հոսանքը կը զրկէ. ասով գինովը իսկոյն կը ցնցուի և գինովութիւնը անյայտ կըլլայ: Դատաւորը որոշած է այս միջոցը գործածել նաև այն հետաքրքիրներուն դէմ որոնք օրէնքը մոռնալով վանդակորմին կրթնիլ ուզեն, որով սրամիտ դատաւորը պիտի կրնայ ազատ օդ շնչել:

ՍԱԼՈՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԲԱՄԲԱՍՈՂՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐ Դ.

(Բօթբօթեան էֆէնտի. — 55—60 տարեկան, անշարժ կալուածներու տէր: Կրօնը թէ սգէտ, նախանձոտ եւ քիչ մ'ալ շատախօս ըլլալուն պատճառաւ «մօրուքը համարել տուած» է, որով տանը մէջ գրեթէ աղպեցութիւն չունի:

Տիկին Բօթբօթեան. — 30—35 տարեկան, սալոնի կատարեալ կին մը. վայելագէտ ու պշտոյ. հարստութեանը համար առած է էրիկը, զոր ձեռքին մէջ ուղածին պէս կը դարձնէ: Զաւակ չունին: Հարաւթը մէկ երկու գիշեր տիկինը իր մէկ քանի երիտասարդ բարեկամներուն հետ թղթախաղով կը զրօնուի, ու չուղելով անոնց վնաս պատճառել, եթէ երբեք յաղթէ՝ դրամին իրենց կը վերադարձնէ. իսկ եթէ յաղթուի՝ տուածը տուած է:

Գեկտեմբերի ցուրտ գիշեր մը ձիւնը կիսովին ծածկած է պատուհանները. չմինէն կը ճարճատէ անկիւնը. թէյը կեռայ սաւառիկին մէջ. կանանչ սեղանը մէջտեղ դրուած է, որուն վրայ ընտիր տեսակէն խաղի թուղթի ծըրարիկը կերելայ եւ գոյնզգոյն ժիշկը տուիին մէջ կը կենան պատրաստ: Տիկինը սալոնին անկիւնը պատուհանին առջև նստած՝ ստիճէ համրիչի մը հետ կը խաղայ, անհամբեր սպասելով դրան վանդակի ձայնին որ եկող հիւրերը պիտի աւետէ. մինչ Բօթբօթեան էֆէնտի ֆիլոսոֆանը ձեռքը, ահաւները կը մաքրէ պղտիկ քայլեր առնելով սենեակին երկայնքին):

Տիկն.— Ինձի նայէ՛ Բօթբօթեան էֆէնտի. վրադ քանի մը մէծիտ աւելի ունիս նէ՛ ինձի տուր:

—Պէ՛ ճանճմ, աս ամեն գիշեր խումար պիտի խողաց:

—Հոգիդ սիրես, նորէն մի՛ սկսիր... չես գիտեր թէ ֆարսիս է ասիկա:

—Կարպիսն ալ վար ասնի ֆրիսն ալ. աս մինչև ե՞րբ ճահիլ ճիւհիլները գլուխդ ժողուած...

—(Ընդմիջելով) Ամա՛ն... սո՛ւս եղիր. ամէն ատեն ասանկ պիտի խօսիս իմ վրաս:

—Զի խօսիմ կըսեմ ամա՛ համբերութիւնս կը հառնի կոր:

—Բու համբերութիւնդ կարեորութիւն չունի ինձի համար:

—Էյ ասոր վերջը:

—Բօթբօթեան էֆէնտի. երթալով անտանելի կըլլաւ կոր. ուրիշներուն կնիկները ինչե՛ր կընեն կոր. նայէ՛, կէռկէռեանին մասամբ անցած իրիկուն սուրճին հետ աֆիսն կլլեցուցեր է էրկանը, անմիջապէս մարդուկին քունը տարեր, ու ինքը Բառիսեան Դուռնիկին հետ գիշերը մինչև առաւօտ Սըլանտիտը անցուցեր է:

—Էյ աղէկ ապուր է կերեր...

(Նոյն պահուն զանգակը կը դարձնուի և երկու շիբ միւսիւններ մտնելով ամենակատարեալ խոնարհութեամբ տիկինը կը բարեւեն, թեթեւ ծաղիկ մըն ալ կընեն ամուսնոյն որ յոշքերը պոստոտած է):

—Տիկին, չեմ կարծեր թէ այնչափ ուշ մընացինք:

—Հինգ տասը վայրկեանի յապաղում մը կար ծեմ ներելի պիտի ըլլայ մեզ համար. նէսքա՛...

Բօթբօթեան էֆ.—Ո՛վ պիտի ներս դայ. դուրսը տահա մա՛րդ մի կայ:

(Տիկինը և հիւրերը կը խնդան)

—Ինչ քու նայինք. նրէկ իրիկուն ո՛ւր էիք:

—Տիկին Խոսրովեանին գայինք:

—Ես ալ ան պիտի հարցնէի ձեզ. իրա՛ւ է որ աղջիկը եւրոպացի մը ուզեր է:

—Ձգէ սա շփացածը. սուտ բան է ատիկա:

—Ես ալ անանկ կը կարծեմ. աչքերնին խաժած մէկ քանի հայ երիտասարդներուն ուշադրութիւնը իրենց վրայ դարձնել տալու համար մանօվրա մըն է:

—Հապա պարծենալին. . . օհ. անտանելի բան է. կղզի գացեր, Փետուրեանենց հիւր եղեր. ալ ասոնց համար ինչ ընելնին չեն գիտցեր. լալով հրաժեշտ տուեր, չեմ գիտեր ինչ:

—Մարդ տուններնին երթալու կը զղջայ. բայց ի՛նչ ընենք. պէտք է ժամանակը սպաննենք. Ամեն իրիկուն միշտ մէկ տեղ մը չերթցուիր ես:

Բօթբօթ.—Ան չէ ամա, միւսիւններ, աս ամեն գիշեր անոր ասոր տունը երթալնուդ. համար հայրերնիդ մայրերնիդ ձեզի բան մը չե՛ն ըսեր:

Տիկին.—Ճանըմ Բօթբօթեան էֆ. ինչե՛ր կըսես. միւսիւնները մաժօռ չե՛ն մի...

—Նասըլ մաճառ:

—Մաճառ չըսի, մաժօռ:

(Այս միջոցին երիտասարդներէն մին սեղանին գլուխը կանցնի և թուղթին ծրարին հետ խաղալով)

—Ալօն, սիւլուբլէ, քօմանսօն. . . մատամ. . . ալօթն թուռ:

Բօթբօթ.—Պէ՛ ճանըմ, սա ֆրանկսըզճան մէկ թարաֆ դրէք, տիւղ հայերէն խօսեցէք որ մենք ալ հասկնանք: Հէ՛մ ասանկ ամեն իրիկուն խումար կը խաղացուի. գիշեր մըն ալ խօսքով անցուցէք:

Տիկին.—(Սիրաւ նեղացած) Օ՜ք Բօթբօթեան էֆէնտի. (ականջն ի վար) ձգէ՛ որ սլոնք սոթտեմ:

—(Նոյնպէս) Կնի՛կ, ես ասանկ զիմբզօմբենքուն բարային մոխթաճ չեմ. . . Երիտ.—Բօթբօթեան էֆէնտի, կուզէք նէ դուք ալ խաղացէք:

—Ձէ՛ ես չեմ խաղար:

—Ուրեմն չմինէին դէմը նստեցէք:

—Ձէ՛, սանկ պիտի նստիմ ըսելով սեղանին քով կնոջը աջ կողմը կը նստի:

Տիկին.—Թուղթ բացէք նայինք:

Բոթ.—Ան չէ ամա, քանի փարայ պիտի խաղաք:

—Մէկ, կամ երկու քառթ մէճիտ:

—Հէ՛ ի՛նչ կըսէք կոր, խենդեցա՛ք սողալ. դուք հոս տուն կործանելու եկաք. սաղլամ մեզ սոթտել կուզէք կոր:

—Քաւ լիցի, Բօթբօթեան էֆէնտի, քանի որ մէկ քառթը շատ կերելի ձեզի, դուք որոշեցէք:

Բոթ.—Է՛հ, սանկ. . . 5 փարայ. բէ՛ք բէ՛ք տասը փարայ. տահա ի՛նչ ըլլայ. մէրամ վազըթ կէ չիրմէք տէյի՛ր մի:

—Օ՛, 5 փարա մի. . . ատիկա մեզի համար մեծ աֆուօնդ մըն է. . . չը լսուած բան է. ներեցէք տիկին, ըսել թէ այդ պայմանաւ չպիտի կրնանք մասնակցիլ խաղին. (ու սեղանէն հեռանալու պէս կընեն):

Տիկին.—(Ամուսնոյն) Հիմա աս ըրածդ վայլե՛ց:

Բօթ.—Պէ՛ ճանըմ, գէ՛շ բան մըն է ըսածս:

Տիկին.—Այո՛, գէ՛շ բան մըն է. դուն սիկառդ վառէ՛ սեյիր ըրէ, մենք պիտի խաղանք. ալօն մէօսիէօ, քօմանսօն:

Բօթ.—Ի՛նչ կըսես կոր կնիկ:

Տիկին.—Ձեմ կրնար քեզ մտիկ ընել. ալ բաւական ձանձրացուցիր. օ՛ն միւսիւններ սկսինք:

(Ու կ'սկսին խաղալ: Բօթբօթեան էֆէնտի կը պարտաւորուի սիկառը վառել, խոր մտածումներու մէջ ընկնած: Խաղը կը շարունակուի և գրամները կը գիզուին տիկնոջ պնակին մէջ: Բօթբօթեան էֆէնտի կը գիտէ որ երիտասարդներուն աչքերը մէյմէկ հրեղէն գունտ դարձած՝ մատամին կը նային բան թէ սահող մէծիտներուն ուստի համբերութիւնը հատած կը գոչէ:)

—Օղլում, ծառքի թուղթիդ նայէ՛, ասոր երեսը մայմուն կը խաղայ կոր. ասանկ երթաս նէ՛ բեթթած հաւերը պիտի դառնաս:

—Հոգ չէ՛ էֆէնտիս. . . գեղեցիկ սեռին հետ խաղացողը պէտք է միշտ յաղթուի:

—Աղէկ ամա պիլէ պիլէ ալ. . . կը յաղթուի. . . խելքիս բանը չէ:

Տիկին.—Հրամանեցէք միւսիւններ վէնթէ ֆօն կը բանամ կոր:

—Օ՛, սաքռէսթի. . .

—Օհօ. քէլ շանս:

—Ահ, մատամ, կերդնում որ. . .

Բօթ.—Ինծի նայեցէք, եավրում, ալ կօգտէ, լմնցուցէք սա օյինը, մեղք էք: Ո՛րի կըսեմ կոր. հէյ. . . քիչ մըն ալ իմ երեսս նայէ՛:

Տիկինը (միւսիւներուն) Ալօն մէօսիէս, շարունակեցինք... բառս քիւ է ֆոռ:

(Երկու երիտասարդները բարձրաձայն կը ծիծաղին: Բոթբոթեան էֆէնտի բարկացած՝ կը պարտաւորի թեւաթոռ մը առած շմինէին դէմը անցնել: Ուր կապաց կամաց չսկսի մրաբել: Թղթախաղը 3—4 ժամ շարունակուելէ ետքը, խաղացողը շոքոլայով և թէյով կը պատուասիրուին:)

Միւսիւն—Բոթբոթեան էֆէնտին ալ անհանգիստ ըրինք. շմինէին դէմը քնացեր է:

Տկն.—Աման թող հոն մնայ քնանայ. կը տեսնէք կոր ա, որչափ անտանելի բան է. քաշածնե ըրս միայն Աստուած գիտէ:

—Գիտենք մատամ, գիտենք, և ամեն ատեն կար և զօրութիւն կը մաղթենք ձեզի:

—Շնորհակալ եմ... ինչ կրնամ ընել. խաչս է որ պիտի քաշեմ մինչև գերեզման. սոսկալի բան է... անտանելի բան է:

(Կէս ժամ ետքը հիւրերը մեկնած են)

Տիկինը (Ամուսնոյն մօտեցած՝ անոր ուսը շոյելով, շնորհալի ձայնով կըսէ) — Բոթբոթեան էֆէնտի, Բոթբոթեան էֆէնտի, եւ անկողինդ մօտիւր. սիրելիս, հոս անհանգիստ ու հարբուխ կըլլաս...

ՏՕՄԻՆՕ

Հայեցի. — Սոյն չորս պատկերները որ յաջորդաբար հրատարակուեցան, անգամ մըն ալ կը հաստատեն թէ մեր ընտանեկան բարձր (բարեկեցիկ) դասու մէկ մեծ մասին մէջ եղած բամբասանքն ու տգեղ բարքերը կը գերազանցեն միջին (էսնաֆ) զասակարգի մէջ տեսնուած բամբասանքն ու տգեղ բարքերը. թէ խնամոտ կըրթութիւնը կամ մաքուր բարոյականը հետզհետէ իր հրաժեշտը կուտայ մեր ընտանեկան շրջանակներէն, ինչ որ անպատուաբեր է տոհմային առաքինութեամբ օժտուածի պարծանքն ունեցող ազգի մը համար:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ

Ճէնազէլէրի մէզարըզա նագլ իտէն պիր արապաճը խասթալանմըշ իտի. քէնտիսինէ խաթըր սօրմայա կելէն քէօյիւն բաբաղը սիւալ իթաի քի:

— Եահո՛ւ, քիլիսէյէ կիտէ՛րմի իտին:

— Բաբաղ էֆէնտի, տօղրուսունու խթէ՛րմիսին, վագաա պու եաշա կէլինճէյէ գատար քիլիսէտէն իչէրի այագ աթմըշ տէյիլ իսէմ տէ, անճագ բէք չօղլարընը օրայա կէօթիւրմիւշիմ տիւր:

— Ա՛հ, փառանձեմ, պիլմէզսին, ճանրմ կիպի սէվէրիմ սէնի:

— Ինանմամ, չիւնքիւ կէչէն կիւն տէտին քի 18 սէնէ տիւր պիր խոստովանանք պիլէ օլմուշ տէյիլսին. սէն ճանընը պէօյլէ՞ մի սէվէրսին:

— Սէն մէրաք էթմէ, մատմաշէլ, եագընտա էվլէնիւսէմ, գըրգ հօբունա պիր հօի իտէրիմ:

Միւշթէրի. — Պիւրատէր, տայիմա սաչարըմը քէստիղին վագըթ նիչիւն պէօյլէ տէհչէթլի հիքեայէլէր իտէրսին:

Բէրուբէր — Սէպէպի շու տըր քի՞ տէհչէթլի հիքեայէլէրտէն սիզին սաչարընըղ տիքիլիւր, պէն տէ գօլայլըզլա օնլարը քէսէրիմ:

— Մարիամ, բէնչէրէլէրի թէմիզլէմէմիշսին պու սապահ:

— Քիմ տէմիշ, մատամ, սօգագտան կէչէն տէօնէնի էյիճէ կէօրէսինիզ տէյու իչէրքի թարաֆտան ճամլարը կիւզէլճէ բարլաթտըմ:

— Էյ, տըշարը թարսիքընը:

— Օ թարաֆընը պիլէրէք թէմիզլէմէտիմ քի գարշըքի էվլէրտէն օտանըզըն իչինտէ կէչէն չէյլէրի կէօրմէսինլէր:

Պիր խասնէ սէրուսինսէ

— Ղազիկ աղա, տօղրու սէօյլէ, պէն պիրտէն պիրէ էօլէճէք օլուրսամ, սէն նէ՞ եաբարըն:

— Աման, մատամ, պու կիպի սէօզլէր իթմէյինիզ պանա. տագըզասընտա չըլտըրըրմ:

— Թէքրար էվլէնի՛րմիսին:

— Հաշա, չըլտըրըրմ. անճագ՝ օ տէրէճէ տէյիլ:

ՊԻՍՔԻԻՅԻ



Անգլիական առաջնակարգ բազմատեսակ պիւսթիլներ այս անգամ սկսան ծախուիլ Մուսալլա Տ. Ագրի կիւմիւշճեանի նպարալաճառատունը: Թէ՛ ապրանցազնուութիւնը եւ թէ՛ գիներու չափաւորութիւնը ստուգելու համար այցելութիւն մը բաւական է:

Отговорникъ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.